

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր (լրացուցիչ ֆինանսավորում)» վարկային համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն**

ՎԱՐԿ ՀԱՄԱՐ 4351 -ARM

(Թիվ 3284-ARM[SF] վարկի լրացուցիչ ֆինանսավորում)

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(Ընթացիկ գործառնություններ)

(Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր (Լրացուցիչ ֆինանսավորում))

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՎ

ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ

միջև

ԱՄՍԱԹԻՎ 2023թ. նոյեմբերի 27

ARM 49078

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(Ընթացիկ գործառնություններ)

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ թվագրված 2023թ. նոյեմբերի 27-ով, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (Վարկառու) եւ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ (ԱԶԲ) միջեւ:

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, ՈՐ

Ա) Վարկառուի եւ ԱԶԲ-ի միջեւ 2015 թվականի հոկտեմբերի 19-ին կնքված վարկային համաձայնագրով (Սկզբնական վարկային համաձայնագիր) ԱԶԲ-ն համաձայնել է տարբեր արժույթներով վաթսուներեք միլիոն երկու հարյուր հիսունինը հազար Փոխառության հատուկ իրավունքին (ՓՀ/SDR63,259,000) համարժեք վարկ տրամադրել Վարկառուին ԱԶԲ-ի Հատուկ ֆոնդերի միջոցների գումարներից՝ Սկզբնական վարկային համաձայնագրի Ժամանակացույց 1-ում նկարագրված Ծրագրի նպատակների համար,

Բ) Վարկառուն դիմել է ԱԶԲ՝ լրացուցիչ վարկ ստանալու նպատակով՝ Սկզբնական վարկային համաձայնագրի Ժամանակացույց 1-ում նկարագրված Ծրագրի նպատակների համար,

Գ) Ծրագիրն իրականացվելու է Վարկառուի Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության՝ որպես կատարող մարմնի, ինչպես նաեւ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏՀՀ)՝ որպես իրականացնող մարմնի կողմից, եւ այդ նպատակով Վարկառուն սույնով նախատեսված վարկային միջոցները տրամադրելու է ՀՏՀՀ-ին՝ ԱԶԲ-ի եւ Վարկառուի համար փոխադարձաբար ընդունելի պայմաններով, եւ

Դ) ԱԶԲ-ն համաձայնել է վարկ տրամադրել Վարկառուին ԱԶԲ-ի սովորական կապիտալ միջոցներից՝ սույնով սահմանված պայմաններով,

ԱՅՍՊԻՍՈՎ, կողմերը համաձայնության են գալիս հետեւյալի մասին.

ՀՈԴՎԱԾ I

Վարկային կանոնակարգեր, սահմանումներ

Կետ 1.01. ԱԶԲ-ի՝ 2022 թվականի հունվարի 1-ի Ընթացիկ գործառնությունների մասով Վարկային կանոնակարգերի (Վարկային կանոնակարգեր) բոլոր դրույթները սույնով դառնում են կիրառելի սույն Վարկային համաձայնագրի նկատմամբ նույն ուժով եւ գործողությամբ այնպես, եթե դրանք ամբողջությամբ սահմանված լինեին սույն համաձայնագրում՝ հաշվի առնելով, սակայն, հետեւյալ փոփոխությունները.

ա) 2.01 (զզ) կետը հանվել է եւ փոխարինվել հետեւյալով.

«Ծրագիր» եզրույթը նշանակում է այն ծրագիրը, որի համար ԱԶԲ-ն համաձայնել է Վարկ տրամադրել, ինչպես սահմանված է Վարկային համաձայնագրում. ընդ որում, այդ սահմանումը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել ԱԶԲ-ի եւ Վարկառուի միջեւ համաձայնությամբ:

բ) Վարկային կանոնակարգերում կիրառվելու դեպքում «Նախագիծ» եզրույթը պետք է փոխարինել «Ծրագիր» եզրույթով:

գ) 2.01 (ss) կետը հանվել է եւ փոխարինվել հետեւյալով.

«Ծրագիրը կատարող մարմին» եզրույթը նշանակում է այն մարմինը կամ մարմինները, որոնք պատասխանատու են Ծրագրի կատարման համար, ինչպես նշված է Վարկային համաձայնագրում:

դ) «Նախագծի կատարող մարմին» եզրույթը, Վարկային կանոնակարգերում կիրառվելու դեպքում պետք է փոխարինել «Ծրագիրը կատարող մարմին» եզրույթով:

Կետ 1.02. Վարկային կանոնակարգերում սահմանված եզրույթները, որոնք օգտագործվում են սույն Վարկային համաձայնագրում, կիրառվում են այդ կանոնակարգերով սահմանված նշանակությամբ՝ բացառությամբ սույն համաձայնագրում դրանք փոփոխելու կամ այլ համատեքստում կիրառելու

դեպքերի: Սույն Վարկային համաձայնագրում գործածված մյուս եզրույթներն ունեն հետեւյալ իմաստները.

ա) «Հակակոռուպցիոն ուղեցույցներ» նշանակում է Արդյունքահեն ծրագրերում խարդախությունը, կոռուպցիան եւ այլ արգելված գործողություններ կանխելուն կամ դրանց ազդեցությունը մեղմելուն ուղղված ԱԶԲ-ի Ուղեցույցներ, որոնք սահմանված են ԱԶԲ-ի Արդյունքահեն ծրագրերի պիլոտավորման քաղաքականության 7-րդ հավելվածում (2013 թվական).

բ) «Դեպոզիտային հաշիվ» նշանակում է սույն Վարկային համաձայնագրի ժամանակացույց 2-ի 2-րդ պարբերության մեջ նշված հաշիվը.

գ) «ՀԿՑ» նշանակում է ՀԿՑ մատրիցայում սահմանված՝ յուրաքանչյուր հատկացման հետ կապակցված ցուցանիշ.

դ) «ՀԿՑ մատրիցա» նշանակում է Ծրագրի ՀԿՑ մատրիցա, որը սահմանված է սույն Վարկային համաձայնագրի ժամանակացույց 2-ի 2-րդ հավելվածում, որը ժամանակ առ ժամանակ թարմացվում է Վարկառուի եւ ԱԶԲ-ի կողմից.

ե) «ՀԿՑ հավաստող արձանագրություն» նշանակում է Վարկառուի՝ յուրաքանչյուր ՀԿՑ-ն բավարարելը հավաստող արձանագրություն, որը սահմանված է ԾԻՓ-ում.

զ) «Թույլատրելի ծախսեր» նշանակում է սույն Վարկային համաձայնագրի ժամանակացույց 3-ի 2-րդ պարբերությամբ նախատեսված թույլատրելի ծախսերը.

է) «Բնապահպանական երաշխիքներ» նշանակում է ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականության փաստաթղթի (SPS) Գլուխ V-ում սահմանված նպատակները եւ քաղաքականության սկզբունքները.

ը) «Ֆինանսական տարի» նշանակում է Վարկառուի համար ֆինանսական տարին, որը ներառում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից մինչեւ դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածը.

թ) «Բարձրարժեք պայմանագրեր» նշանակում է՝ (i) աշխատանքների ձեռքբերման, ճարտարապետաշինարարական կապալի, մատակարարման եւ տեղադրման պայմանագրեր, որոնց արժեքը յուրաքանչյուր պայմանագրի մասով կազմում է 25 միլիոն ԱՄՆ դոլար կամ գերազանցում է այն. (ii) ապրանքների գնման պայմանագրեր, որոնց արժեքը յուրաքանչյուր պայմանագրի մասով կազմում է 15 միլիոն ԱՄՆ դոլար կամ գերազանցում է այն. (iii) տեղեկատվական տեխնոլոգիաների կամ ոչ խորհրդատվական ծառայությունների պայմանագրեր, որոնց արժեքը յուրաքանչյուր պայմանագրի մասով կազմում է 10 միլիոն ԱՄՆ դոլար կամ գերազանցում է այն. եւ (iv) խորհրդատվական ծառայությունների պայմանագրեր, որոնց արժեքը յուրաքանչյուր պայմանագրի մասով կազմում է 7.5 միլիոն ԱՄՆ դոլար կամ գերազանցում է այն.

ժ) «Իրականացման համաձայնագիր» նշանակում է Վարկառուի եւ Ծրագիրը կատարող մարմնի միջեւ Ծրագրի իրականացման նպատակով կնքված իրականացման համաձայնագիր.

ժա) «Բնիկ ժողովուրդների երաշխիքներ» նշանակում է ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականության փաստաթղթի Գլուխ V-ում նախատեսված նպատակները եւ քաղաքականության սկզբունքները.

ժբ) «Հարկադիր տարաբնակեցման երաշխիքներ» նշանակում է ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականության փաստաթղթի Գլուխ V-ում նախատեսված նպատակները եւ քաղաքականության սկզբունքները.

ժգ) «Վարկային հատկացումների ձեռնարկ» նշանակում է ԱԶԲ-ի Վարկային հատկացումների ձեռնարկը (2022 թվական, որում ժամանակ առ ժամանակ փոփոխություններ են արվում).

ժդ) «ՄՍԿ» նշանակում է Մեդվեդեւ-Սպոնհոյեր-Կարնիկ սանդղակ, որը երկրաշարժի առաջացման գոտում դիտարկված ազդեցությունների հիման վրա ցնցումների ուժգնությունը գնահատելու համար օգտագործվող մակրոսեյսմիկ ինտենսիվության սանդղակ է.

ժե) «ՏԿԵՆ» նշանակում է Վարկառուի Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարություն, կամ դրա՝ ԱԶԲ-ի համար ընդունելի իրավահաջորդը.

ժզ) «ԾԻՓ» նշանակում է Ծրագրի նպատակներով ծրագրի իրականացման փաստաթուղթ՝ թվագրված 2023թ. օգոստոսի 7-ով, որը ժամանակ առ ժամանակ թարմացվում է Վարկառուի եւ ԱԶԲ-ի կողմից.

ժէ) «Ծրագրի գործողությունների պլան» նշանակում է Ծրագրի գործողությունների պլան՝ թվագրված 2023թ. օգոստոսի 7-ով, որը ժամանակ առ ժամանակ թարմացվում է Վարկառուի եւ ԱԶԲ-ի կողմից.

ժը) «Ծրագրի գործողություններ» նշանակում է Ծրագրի գործողությունների պլանում սահմանված գործողությունները.

ժթ) «Ծրագրի ավարտի ամսաթիվ» նշանակում է 2027 թվականի սեպտեմբերի 30-ը կամ որեւէ այլ ամսաթիվ, որի վերաբերյալ կարող են համաձայնության գալ Վարկառուն եւ ԱԶԲ-ն.

ի) «Ծրագիրը կատարող մարմին» նշանակում է Վարկային կանոնակարգերի նպատակներով եւ դրանց շրջանակներում ՏԿԵՆ-ը կամ դրա՝ ԱԶԲ-ի համար ընդունելի իրավահաջորդը, որը պատասխանատու է Ծրագրի կատարման համար.

իա) «ԾԵՀԳ(PSSA)» նշանակում է Ծրագրի երաշխիքների համակարգի գնահատում, ներառյալ՝ դրա ցանկացած թարմացում, որը պատրաստվել էլ եւ ներկայացվել է Վարկառուի կողմից եւ հաստատվել ԱԶԲ-ի կողմից.

իբ) «ԴԱՎԾ» նշանակում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի թիվ 797-Ն որոշմանը համապատասխան Վարկառուի կողմից հաստատված «Դպրոցների ամրացման եւ վերանորոգման ծրագիր»-ը, որը ժամանակ առ ժամանակ թարմացվում է Վարկառուի կիրառելի կանոններին եւ ընթացակարգերին համապատասխան.

իգ) «SPS» նշանակում է ԱԶԲ-ի Անվտանգության երաշխիքների

քաղաքականության փաստաթուղթը (2009 թվական). եւ

իդ) «Աղյուսակ» նշանակում է սույն Վարկային համաձայնագրի ժամանակացույց 2-ի 1-ին հավելվածում նախատեսված Վարկային միջոցների հատկացմանը եւ առհանմանը վերաբերող աղյուսակը:

ՀՈԴՎԱԾ II

Վարկը

Կետ 2.01. ա) ԱԶԲ-ն համաձայնում է ԱԶԲ-ի սովորական կապիտալ միջոցներից Վարկառուին տրամադրել վաթսունվեց միլիոն հարյուր հազար եվրոյի (€66,100,000) չափով վարկ, ընդ որում, նշված գումարը կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել Արժույթի փոխարկման միջոցով՝ սույն Վարկային համաձայնագրի 2.06 կետի դրույթներին համապատասխան:

բ) Վարկն ունի մայր գումարի 7 տարի մարման ժամկետ եւ վարկի արտոնյալ ժամանակահատված՝ համաձայն սույն կետի «գ» պարբերության:

գ) Սույն կետի «բ» պարբերության մեջ օգտագործված «արտոնյալ ժամանակահատված» եզրույթը նշանակում է Մայր գումարի առաջին մարման ամսաթվին նախորդող ժամանակահատվածը՝ սույն Վարկային համաձայնագրի ժամանակացույց 1-ում սահմանված մարման ժամանակացույցի համաձայն:

Կետ 2.02. Վարկառուն ԱԶԲ-ին վճարում է տոկոսագումար վարկի՝ ժամանակ առ ժամանակ առհանված եւ դեռեւս չվճարված մայր գումարի նկատմամբ՝ յուրաքանչյուր Տոկոսագումարի վճարման ժամանակահատվածի համար հետեւյալի հանրագումարի չափով.

ա) Euribor/Եվրոպական միջբանկային առաջարկի տոկոսադրույքի,

բ) 0.60% -ի, ինչպես նախատեսվում է Վարկային կանոնակարգերի 3.02 կետով՝ հանած 0.10%, ինչպես նախատեսվում է Վարկային կանոնակարգերի 3.03 կետով, եւ

գ) մարման հավելավճարի (maturity premium) 0.30%-ի չափով, ինչպես նախատեսվում է Վարկային կանոնակարգերի 3.03 կետով:

Կետ 2.03. Վարկառուն տարեկան վճարում է 0.15%-ի չափով պարտավորավճար: Այդ գումարը հաշվեգրվում է վարկի ամբողջական գումարի նկատմամբ (հանած ժամանակ առ ժամանակ առհանվող գումարները)՝ սկսած սույն Վարկային համաձայնագրի ամսաթվին հաջորդող 60-րդ օրվանից հետո:

Կետ 2.04. Վարկի տոկոսագումարը եւ այլ վճարներ կատարվում են կիսամյակային կտրվածքով՝ յուրաքանչյուր տարվա հունվարի 15-ին եւ հուլիսի 15-ին:

Կետ 2.05. Վարկառուն Վարկային հաշվից առհանված Վարկի մայր գումարը վերադարձնում է սույն Վարկային համաձայնագրի ժամանակացույց 1-ում սահմանված դրույթներին համաձայն:

Կետ 2.06. ա) Պարտքի ողջամիտ կառավարման նպատակով Վարկառուն կարող է ցանկացած ժամանակ դիմել Վարկի պայմաններում հետեւյալ Փոխարկումները կատարելու խնդրանքով.

(i) Վարկի ընդհանուր մայր գումարի կամ դրա՝ ինչպես առհանված եւ չվճարված, այնպես էլ չառհանված մասի Վարկի արժույթի փոխարինում որեւէ այլ Հաստատված արժույթով,

(ii) Վարկի ընդհանուր մայր գումարի կամ դրա՝ ինչպես առհանված, այնպես էլ դեռեւս չվճարված մասի նկատմամբ կիրառվող տոկոսադրույքի բազայի փոփոխում Լողացող տոկոսադրույքից Ֆիքսված տոկոսադրույքի կամ հակառակը, եւ

(iii) Վարկի ընդհանուր մայր գումարի կամ դրա՝ ինչպես առհանված, այնպես էլ դեռեւս չվճարված մասի նկատմամբ կիրառելի Լողացող տոկոսադրույքի սահմանափակում՝ նշված Լողացող տոկոսադրույքի նկատմամբ Տոկոսադրույքի սահմանային չափը հաստատելու կամ Տոկոսադրույքի առավելագույն եւ նվազագույն շեմերը սահմանելու միջոցով:

բ) Սույն կետի «ա» պարբերության համաձայն փոխարկման ցանկացած պահանջ, որն ընդունվում է ԱԶԲ-ի կողմից, համարվում է «Փոխարկում», ինչպես սահմանվում է Վարկային կանոնակարգերի 2.01«ե» կետում, եւ այն ուժի մեջ է մտնում Վարկային կանոնակարգերի V հոդվածի եւ Փոխարկման ուղեցույցների դրույթներին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ III

Վարկային միջոցների օգտագործումը

Կետ 3.01. Վարկառուն Վարկային միջոցները տրամադրում է Ծրագիրը կատարող մարմինն՝ ԱԶԲ-ի եւ Վարկառուի համար փոխհամաձայնեցված պայմաններով, եւ ապահովում է, որ Ծրագիրը կատարող մարմինն այդ միջոցներն օգտագործի Ծրագրի ծախսերի ֆինանսավորման նպատակով՝ սույն Վարկային համաձայնագրում սահմանված դրույթներին համապատասխան:

Կետ 3.02. Վարկային միջոցները բաշխվում եւ առհանվում են սույն Վարկային համաձայնագրի ժամանակացույց 2-ի դրույթների համաձայն: Նշված ժամանակացույցը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել Վարկառուի եւ ԱԶԲ-ի միջեւ ձեռք բերված համաձայնությամբ:

Կետ 3.03. Վարկային կանոնակարգերի 9.02 կետի նպատակներով Վարկի փակման ամսաթիվ է համարվում 2027 թվականի սեպտեմբերի 30-ը կամ այնպիսի ամսաթիվը, որը ժամանակ առ ժամանակ կարող է համաձայնեցվել Վարկառուի եւ ԱԶԲ-ի միջեւ:

ՀՈԴՎԱԾ IV

Հատուկ պայմաններ

Կետ 4.01. Ծրագիրն իրականացնելիս Վարկառուն կատարում է սույն Վարկային համաձայնագրի ժամանակացույց 3-ում նախատեսված բոլոր պարտավորությունները կամ ապահովում է դրանց կատարումը:

Կետ 4.02. ա) Վարկառուն՝ (i) Ծրագրի հետ կապված վարում է առանձին հաշիվներ եւ գրանցամատյաններ, (ii) Ծրագրի համար պատրաստում է տարեկան ֆինանսական հաշվետվություններ՝ ԱԶԲ-ի համար ընդունելի ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ստանդարտներին համապատասխան, (iii) ապահովում է այդ ֆինանսական հաշվետվությունների տարեկան աուդիտն անկախ աուդիտորների կողմից, որոնց որակավորումը, փորձը եւ նրանց ներկայացվող տեխնիկական առաջադրանքն ընդունելի են ԱԶԲ-ի համար՝ համաձայն ԱԶԲ-ի համար ընդունելի աուդիտի ստանդարտների, (iv) որպես յուրաքանչյուր այդպիսի աուդիտի մաս ապահովում է աուդիտորների կողմից այնպիսի հաշվետվության ներկայացում, որը ներառում է ֆինանսական հաշվետվությունների եւ Վարկային միջոցների օգտագործման վերաբերյալ աուդիտորների եզրակացությունը (եզրակացությունները), ինչպես նաեւ կառավարման վերաբերյալ գրության ներկայացում (որտեղ նշվում են աուդիտի ընթացքում բացահայտված՝ Ծրագրի ներքին հսկողության մասով թերությունները, եթե այդպիսիք կան), եւ (v) յուրաքանչյուր համապատասխան ֆինանսական տարվա ավարտից ոչ ուշ, քան 6 ամիս հետո ԱԶԲ-ին է տրամադրում աուդիտորական ուսումնասիրություն անցած ֆինանսական հաշվետվությունների, աուդիտի հաշվետվության եւ կառավարման վերաբերյալ գրության պատճենները՝ բոլորն անգլերեն, ինչպես նաեւ այդ փաստաթղթերին առնչվող եւ դրանց աուդիտի վերաբերյալ այլ տեղեկատվություն, որն ԱԶԲ-ն ժամանակ առ ժամանակ ողջամտորեն կպահանջի:

բ) ԱԶԲ-ն կայքում տեղադրելու միջոցով հրապարակում է Ծրագրի մասով աուդիտ անցած տարեկան ֆինանսական հաշվետվությունները եւ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորների եզրակացությունը՝ դրանց ընդունելի լինելու վերաբերյալ ԱԶԲ-ի հաստատումից հետո 14 օրվա ընթացքում:

գ) Ի լրումն սույն կետի վերոնշյալ «ա» ենթակետով նախատեսված աուդիտ անցած տարեկան ֆինանսական հաշվետվությունների՝ Վարկառուն ապահովում է, որ Ծրագիրը կատարող մարմինը՝ (i) տրամադրի ԱԶԲ-ի համար ընդունելի ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ստանդարտներին համապատասխան պատրաստված իր տարեկան ֆինանսական հաշվետվությունները, (ii) ապահովի իր ֆինանսական հաշվետվությունների տարեկան աուդիտի իրականացումն անկախ աուդիտորների կողմից, որոնց որակավորումը, փորձը եւ նրանց ներկայացվող տեխնիկական առաջադրանքն ընդունելի են ԱԶԲ-ի համար՝ համաձայն ԱԶԲ-ի համար ընդունելի աուդիտի ստանդարտների, եւ (iii) համապատասխան մարմնի կողմից հաստատվելուց ոչ ուշ, քան 1 ամիս հետո եւ ոչ ուշ, քան յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից 12 ամիս հետո, նայած որն է ավելի վաղ, ԱԶԲ-ին տրամադրի աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների պատճենները անգլերենով եւ այդ փաստաթղթերին ու դրանց աուդիտին վերաբերող այնպիսի տեղեկատվություն, որը ԱԶԲ-ն ժամանակ առ ժամանակ ողջամտորեն կպահանջի:

դ) ԱԶԲ-ի պահանջով Վարկառուն ԱԶԲ-ի համար ապահովում է սույն կետի վերոնշյալ «ա»(iii) ենթակետի համաձայն նշանակված աուդիտորների հետ Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների եւ Վարկառուի՝ Ծրագրին առնչվող ֆինանսական խնդիրների քննարկումը եւ թույլ է տալիս ու պահանջում տվյալ աուդիտորների ցանկացած ներկայացուցչի մասնակցությունը ԱԶԲ-ի կողմից նախաձեռնվող այդպիսի քննարկումներին: Նախատեսվում է, որ նման քննարկումներն անցկացվելու են միայն Վարկառուի լիազորված պաշտոնատար անձի ներկայությամբ, եթե Վարկառուն այլ համաձայնության չի գալիս:

Կետ 4.03. Որպես Վարկային կանոնակարգերի 7.01 եւ 7.04 կետերում նախատեսված տեղեկատվության եւ հաշվետվությունների մաս, Վարկառուն ԱԶԲ-ին է տրամադրում կամ ապահովում է, որ տրամադրվեն՝ ա) կիսամյակային հաշվետվություններ՝ Ծրագրի իրականացման, այդ թվում՝ ՀԿՑ-ների իրագործման, Ծրագրի գործողությունների եւ Թույլատրելի ծախսերի կատարման

վերաբերյալ, եւ ք) ըստ ԱԶԲ-ի ողջամիտ պահանջի՝ սույն կետի վերոնշյալ «ա» ենթակետով նկարագրված հաշվետվությունների հետ կապված հավելյալ տեղեկատվություն եւ այլ տեղեկատվություն՝ Ծրագրի իրականացման վերաբերյալ:

Կետ 4.04. Վարկառուն հնարավորություն է տալիս ԱԶԲ-ի ներկայացուցիչներին իրականացնել Ծրագրի եւ ցանկացած համապատասխան գրառման ու փաստաթղթերի ստուգումներ:

Կետ 4.05. ա) Վարկառուն իրականացման համաձայնագրին համապատասխան իր իրավունքներն իրացնում է ի պաշտպանություն Վարկառուի եւ ԱԶԲ-ի շահերի, ինչպես նաեւ Վարկի նպատակներին համապատասխան:

բ) Իրականացման համաձայնագրի համաձայն՝ որեւէ իրավունք կամ պարտականություն չի հանձնարարվում, փոփոխվում, վերացվում, կամ որեւէ իրավունքից կամ պարտականությունից չեն հրաժարվում՝ առանց ԱԶԲ-ին նախապես ծանուցելու:

ՀՈԴՎԱԾ V

Ուժի մեջ մտնելը

Կետ 5.01. Վարկային կանոնակարգերի 10.04 կետի նպատակներով սույն Վարկային համաձայնագիրն ուժի մեջ է մտնում սույն Վարկային համաձայնագրի ամսաթվից 90 օր հետո:

ՀՈԴՎԱԾ VI

Այլ դրույթներ

Բաժին 6.01. Վարկային կանոնակարգերի 12.02 կետի նպատակներով

Վարկառուի ֆինանսների նախարարը հանդես է գալիս որպես Վարկառուի ներկայացուցիչ:

Բաժին 6.02. Վարկային կանոնակարգերի 12.01 կետի նպատակներով նշվում են հետևյալ հասցեները.

Վարկառուի համար՝

Ֆինանսների նախարարություն

Հայաստանի Հանրապետություն,

ք. Երեւան, 0010

Մելիք-Ադամյան 1

Ֆաքս՝

(374 11) 800-132

ԱԶԲ-ի համար՝

Ասիական զարգացման բանկ

Ֆիլիպիններ, ք. Մանդալայոնգ,

1550 Մետրո Մանիլա,

ԱԶԲ պողոտա 6

Ֆաքս՝

(632) 8636-2444

(632) 8636-2424

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ՝ սույն Համաձայնագրի կողմերը, գործելով իրենց պատշաճորեն լիազորված ներկայացուցիչների միջոցով, ապահովում են, որ սույն Վարկային համաձայնագիրն ստորագրվի վերը նշված առաջին օրվա եւ տարվա

դրությամբ իրենց համապատասխան անունից եւ հանձնվի ԱԶԲ-ի գլխամասային գրասենյակ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Վահե Հովհաննիսյան
ՀՀ ֆինանսների նախարար

ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԲԱՆԿ

Դոնալդ Լամբերտ
ԱԶԲ հայաստանյան գրասենյակի
տնօրեն

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 1

Մարման ժամանակացույց

1. Հետեւյալ աղյուսակում սահանվում են Վարկի Մայր գումարի մարման ամսաթվերը եւ Մայր գումարի մարման յուրաքանչյուր ամսաթվի վճարվող Վարկի ընդհանուր մայր գումարի նկատմամբ հաշվարկվող տոկոսագումարը (Վճարման մասնաբաժին): Մայր գումարի առաջին մարման ամսաթվի դրությամբ վարկային միջոցներն ամբողջությամբ առհանված լինելու դեպքում Վարկի Մայր գումարի մարման յուրաքանչյուր ամսաթվի դրությամբ Վարկառուի կողմից մարվող Վարկի Մայր գումարը որոշվում է ԱԶԲ-ի կողմից՝ (ա) բազմապատկելով Վարկի ընդհանուր մայր գումարը, որն առհանվել եւ չի մարվել Մայր գումարի առաջին մարման օրվա դրությամբ, բ) Մայր գումարի յուրաքանչյուր մարման ամսաթվի դրությամբ Վճարման մասնաբաժնով. այդպիսի մարման գումարն ըստ անհրաժեշտության ճշգրտվում է սույն ժամանակացույցի 4-րդ պարբերությունում նշված գումարները նվազեցնելու նպատակով, որոնց նկատմամբ կիրառվում է Արժույթի փոխարկումը:

<u>Մարման ամսաթիվը</u>	<u>Վճարման մասնաբաժին</u> (տոկոսային արտահայտությամբ)
2039թ. հունվարի 15	7.142857
2039թ. հուլիսի 15	7.142857
2040թ. հունվարի 15	7.142857
2040թ. հուլիսի 15	7.142857
2041թ. հունվարի 15	7.142857
2041թ. հուլիսի 15	7.142857
2042թ. հունվարի 15	7.142857
2042թ. հուլիսի 15	7.142857
2043թ. հունվարի 15	7.142857
2043թ. հուլիսի 15	7.142857
2044թ. հունվարի 15	7.142857
2044թ. հուլիսի 15	7.142857
2045թ. հունվարի 15	7.142857
2045թ. հուլիսի 15	7.142859
Ընդամենը	100.000000

2. Մայր գումարի առաջին մարման ամսաթվի դրությամբ Վարկային միջոցներն ամբողջությամբ առհանված չլինելու դեպքում Մայր գումարի մարման յուրաքանչյուր ամսաթվի դրությամբ Վարկառուի կողմից մարվող Վարկի Մայր գումարը որոշվում է հետեւյալ կերպ.

ա) Մայր գումարի առաջին մարման ամսաթվի դրությամբ վարկային միջոցների առհանման չափով Վարկառուն վերադարձնում է այդ օրվա դրությամբ առհանված եւ չվճարված գումարը՝ սույն Ժամանակացույցի 1-ին պարբերությունում նախատեսված կարգով, եւ

բ) Մայր գումարի առաջին մարման ամսաթվից հետո կատարված ցանկացած առհանման դեպքում այդ գումարները վերադարձվում են նման առհանման ամսաթվին հաջորդող՝ Մայր գումարի յուրաքանչյուր մարման ամսաթվին՝ ԱԶԲ-ի կողմից սահմանված գումարի չափով՝ յուրաքանչյուր այդպիսի առհանված գումարը բազմապատկելով կոտորակով, որի համարիչը սույն Ժամանակացույցի 1-ին պարբերության աղյուսակում սահմանված՝ Մայր գումարի տվյալ մարման ամսաթվի դրությամբ սկզբնական Վճարման մասնաբաժինն է (Սկզբնական վճարման մասնաբաժին), իսկ հայտարարը՝ այդ ամսաթվին կամ դրանից հետո ընկած Ժամանակահատվածի համար Մայր գումարի մարման մնացած բոլոր Սկզբնական վճարման մասնաբաժինների ընդհանուր գումարը: Վճարվող նման գումարներն ըստ անհրաժեշտության ճշգրտվում են սույն Ժամանակացույցի 4-րդ պարբերությունում նշված ցանկացած գումար նվազեցնելու նպատակով, որի նկատմամբ կիրառվում է Արժույթի փոխարկումը:

3. Մայր գումարի ցանկացած մարման ամսաթվի դրությամբ վճարվելիք Մայր գումարները հաշվարկելու նպատակներով Մայր գումարի մարման որեւէ ամսաթվին նախորդող երկու օրացուցային ամիսների ընթացքում կատարված առհանումները դիտարկվում են որպես առհանված եւ չվճարված՝ առհանման ամսաթվին հաջորդող Մայր գումարի երկրորդ մարման ամսաթվի դրությամբ, եւ ենթակա են վճարման առհանման ամսաթվին հաջորդող՝ Մայր գումարի երկրորդ մարման ամսաթվից սկսած՝ Մայր գումարի մարման յուրաքանչյուր ամսաթվին:

4. Անկախ սույն ժամանակացույցի 1-ին եւ 2-րդ պարբերություններում սահմանված դրույթների՝ Վարկի մայր գումարի առհանված ամբողջ գումարը կամ դրա մի մասը Հաստատված արժույթի փոխարկելու դեպքում այդպիսի Հաստատված արժույթի փոխարկված գումարի չափը, որը ենթակա է վճարման Փոխարկման ժամանակահատվածում ընկնող Մայր գումարի մարման ցանկացած ամսաթվի դրությամբ, սահմանվում է ԱԶԲ-ի կողմից՝ նշված Փոխարկումից անմիջապես առաջ եղած արժույթով արտահայտված գումարը բազմապատկելով կա՛մ ա) արժույթի փոխարժեքով, որն արտացոլում է տվյալ Փոխարկման հետ կապված Արժույթի հեջավորման գործարքի շրջանակներում ԱԶԲ-ի կողմից վճարվելիք՝ վերոնշյալ Հաստատված արժույթով արտահայտված մայր գումարները, կա՛մ բ) Սահմանված տոկոսադրույքի (Screen Rate) փոխարժեքի բաղադրիչով, եթե ԱԶԲ-ն այդպես որոշի Փոխարկման ուղեցույցների համաձայն:

5. Եթե Վարկի մայր գումարի առհանված եւ չվճարված մասը ժամանակ առ ժամանակ արտահայտվում է Վարկի գումարի՝ մեկից ավելի արժույթներով, ապա սույն ժամանակացույցի դրույթները կիրառվում են Վարկի յուրաքանչյուր արժույթով արտահայտված գումարի համար առանձին այնպես, որ յուրաքանչյուր այդպիսի գումարի համար ստեղծվի մարման առանձին ժամանակացույց:

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 2

Վարկային միջոցների հատկացում եւ առհանում

Ընդհանուր դրույթներ

1. Բացառությամբ սույն ժամանակացույցով նախատեսված կամ ԱԶԲ-ի հետ այլ համաձայնության գալու դեպքերի՝ վարկային միջոցները հատկացվում են Վարկային հատկացումների ձեռնարկին համապատասխան:

Դեպոզիտային հաշիվ

2. Վարկային հաշվից առհանում կատարելու վերաբերյալ առաջին դիմումը ԱԶԲ-ին ներկայացնելուց առաջ Վարկառուն Ծրագիրը կատարող մարմնի անունով Ծրագրի համար պետական գանձապետարանում բացում է հաշիվ («Դեպոզիտային հաշիվ»), որին պետք է փոխանցվի Ծրագրի գումարը ՀՀ կենտրոնական բանկում առկա Վարկառուի միասնական գանձապետական հաշվի միջոցով (որի մանրամասները Վարկառուն պատշաճ կարգով կտեղեկացվի ԱԶԲ-ին՝ առհանման հայտում): Տարընթերցումներից խուսափելու նպատակով, Վարկային հաշվից ցանկացած առհանում կկատարվի Դեպոզիտային հաշվի միջոցով: Դեպոզիտային հաշիվը կառավարվում եւ փակվում է ԱԶԲ-ի համար ընդունելի համարվող պայմաններին համապատասխան:

3. Դեպոզիտային հաշվի հետ կապված Վարկառուն վարում է առանձին գրանցումներ՝ ԱԶԲ-ի համար ընդունելի հաշվապահական սկզբունքներին համապատասխան: ԱԶԲ-ի պահանջով Վարկառուն կազմակերպում է Դեպոզիտային հաշվի ֆինանսական հաշվետվությունների աուդիտ անկախ աուդիտորների կողմից, որոնց որակավորումը, փորձը եւ նրանց ներկայացվող տեխնիկական առաջադրանքն ընդունելի են ԱԶԲ-ի համար, համապատասխանում են աուդիտի միջազգային

ստանդարտներին կամ ԱԶԲ-ի համար ընդունելի՝ դրանց ազգային համարժեքին: Դրանք կազմելուց անմիջապես հետո, սակայն ամեն դեպքում ոչ ուշ, քան այդ մասին ԱԶԲ-ի կողմից պահանջ ներկայացնելուց 6 ամիս հետո, աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների պատճենները եւ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորների եզրակացությունը տրամադրվում են ԱԶԲ-ին անգլերենով:

Վարկային հաշվից առհանման հիմքերը

4. ա) Աղյուսակում ներկայացված են ՀԿՑ մատրիցայով սահմանված՝ Վարկառուի կողմից համապատասխան ՀԿՑ թիրախները բավարարելուց անմիջապես հետո ՀԿՑ-ին առնչվող առհանման համար հատկացվող Վարկային գումարները: Աղյուսակում ներկայացված տարեթվերը մոտավոր են: Դրանք չեն սահմանափակում հաշվից առհանումը՝ անկախ այն բանից, թե ՀԿՑ թիրախները բավարարվել են նշված տարվանից առաջ, թե հետո՝ պայմանով, որ այդպիսի ՀԿՑ թիրախները բավարարվել են Ծրագրի ավարտի ամսաթվին կամ նախքան այդ ամսաթիվը:

բ) Վարկառուին ծանուցելու միջոցով ԱԶԲ-ն կարող է վերաբաշխել Աղյուսակում ներկայացված Վարկային գումարները միեւնույն ՀԿՑ-ի շրջանակում կամ մեկ ՀԿՑ-ից մյուսը վերաբաշխելու միջոցով:

5. Վարկառուն չի կարող ներկայացնել Վարկային հաշվից առհանման մեկից ավելի դիմում Ֆինանսական տարվա յուրաքանչյուր եռամսյակում, եթե ԱԶԲ-ի հետ այլ համաձայնություն չի ձեռք բերվում:

6. Նախքան Վարկային հաշվից ՀԿՑ-ի հետ կապված առհանման դիմում ներկայացնելը Վարկառուն ԱԶԲ-ին է ներկայացնում բավարար ապացույցներ ՀԿՑ Հավաստման արձանագրությանը համապատասխան, որոնք ցույց են տալիս, որ՝ ա) ամբողջությամբ բավարարվել է տվյալ ՀԿՑ-ն, կամ բ) այն ՀԿՑ-ն, որի մասով թույլատրվում է մասնակի հատկացում (ինչպես նշված է ՀԿՑ

մատրիցայում), բավարարվել է մասնակի հատկացման համար պահանջվող չափով՝ ՀԿՑ Հավաստման արձանագրությանը համապատասխան: ՀԿՑ-ն ամբողջությամբ կամ մասնակի բավարարելու վերաբերյալ ԱԶԲ-ի կողմից հաստատում ստանալուց անմիջապես հետո Վարկառուն կարող է ԱԶԲ-ին ներկայացնել համապատասխան Վարկային գումարի առհանման մասին դիմում՝ տվյալ ՀԿՑ-ի մասով:

Տոկոսավճար

7. Աղյուսակում «Տոկոսավճար» սյունակում նշված գումարը նախատեսված է Ծրագրի իրականացման ժամանակահատվածում Վարկի տոկոսավճարի ֆինանսավորման համար: ԱԶԲ-ն իրավունք ունի Վարկային հաշվից առհանելու եւ Վարկառուի անունից իրեն վճարելու այդ տոկոսավճարի համար նախատեսվող գումարները դրանց վճարման ամսաթվին:

Կանխավճարի ձեռով ֆինանսավորում

8. Նախքան ՀԿՑ-ները բավարարելը Վարկառուն կարող է Վարկային հաշվից որպես կանխավճար հանել ֆինանսավորման գումար՝ Ծրագրի ֆինանսավորման պահանջները բավարարելու եւ այդ ՀԿՑ-ների բավարարումն ապահովելու նպատակով՝ պայմանով, որ ֆինանսավորման չվճարված կանխավճարային գումարը որեւէ դեպքում չպետք է գերազանցի Վարկի գումարի 25%-ը: ԱԶԲ-ն նվազեցնում է ֆինանսավորման չվճարված կանխավճարային գումարը կամ դրա որեւէ մասը Վարկային միջոցներից՝ ՀԿՑ-ները բավարարելուց հետո վերադարձնելու պայմանով:

Հաշտեցում

9. Եթե որեւէ ՀԿՑ չի բավարարվել նախքան Ծրագրի ավարտի

ամսաթիվը, ապա Ծրագրի ավարտի ամսաթվից հետո 6 ամսվա ընթացքում Վարկառուն ԱԶԲ-ին է վերադարձնում տվյալ ՀԿՑ-ի մասով ֆինանսավորման չվճարված կանխավճարային գումարը կամ դրա մի մասը:

10. Եթե ընդհանուր Թույլատրելի ծախսերի գումարն ավելի քիչ է, քան Վարկառուի կողմից առհանված Վարկային գումարը, ապա Վարկառուն ԱԶԲ-ին է վերադարձնում պակասող գումարի չափով գումար Ծրագրի ավարտի օրվանից 6 ամսվա ընթացքում:

Ժամանակացույց 2-ի 1-ին հավելված

ԱՂՅՈՒՍԱԿ

ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԵՎ ԱՌՀԱՆՈՒՄ (Եվրոյով)					
Հատկացման հետ կապակցված ցուցանիշ (ՀԿՑ)	ԱԶԲ-ի ընդհանուր ֆինանսավորման հատկացում	2024թ.	2025թ.	2026թ.	2027թ.
ՀԿՑ 1. Ծածկույթի ավելացում	21,400,000	700,000	4,700,000	8,900,000	7,100,000
ՀԿՑ 2. Դպրոցաշինություն	37,200,000	3,200,000	14,700,000	10,800,000	8,700,000
ՀԿՑ 3. Իրազեկման արշավներ	2,800,000	200,000	1,100,000	800,000	700,000
Ենթագումար	61,400,000	4,100,000	20,300,000	20,500,000	16,500,000
Տոկոսավճար	4,700,000				
ԸՆԴԱՄԵՆԸ	66,100,000				

ՀԿՑ

Հատկացման հետ կապակցված ցուցանիշներ (ՀԿՑ)	Բազային տվյալ եւ տարի	Կարգավիճակը 2023 թվականի մարտի դրությամբ	2023-2024	2024-2025	2025-2026	2026-2027
ՀԿՑ 1. Մինչեւ 2027 թվականը ՄՍԿ երկրաշարժերի ուժգնության սանդղակի-IX բալ ուժգնությամբ երկրաշարժի անվտանգության չափանիշներին համապատասխանող դպրոցական շենքերում սովորող աշակերտների տոկոսն ավելացել է 5.3 տոկոսային կետով:	2014 թվական. Կառավարության սեյսմիկ անվտանգության գործող չափանիշները բավարարող դպրոցների շենքերում սովորող աշակերտների 13.4%-ը (իգական սեռ = 6.5%, արական սեռ = 6.9%)	ՄՍԿ երկրաշարժերի ուժգնության սանդղակի-IX բալ ուժգնությամբ երկրաշարժի անվտանգության չափանիշներին համապատասխանող դպրոցական շենքերում սովորող աշակերտների տոկոսը բազային տվյալների համեմատ ավելացել է 1.8 տոկոսային կետով:		ՄՍԿ երկրաշարժերի ուժգնության սանդղակի-IX բալ ուժգնությամբ երկրաշարժի անվտանգության չափանիշներին համապատասխանող դպրոցական շենքերում սովորող աշակերտների տոկոսը բազային տվյալների համեմատ ավելացել է առնվազն 2.6 տոկոսային կետով: (թույլատրվում է մասնակի	ՄՍԿ երկրաշարժերի ուժգնության սանդղակի-IX բալ ուժգնությամբ երկրաշարժի անվտանգության չափանիշներին համապատասխանող դպրոցական շենքերում սովորող աշակերտների տոկոսը բազային տվյալների համեմատ ավելացել է առնվազն 4.5 տոկոսային կետով: (թույլատրվում է մասնակի	ՄՍԿ երկրաշարժերի ուժգնության սանդղակի-IX բալ ուժգնությամբ երկրաշարժի անվտանգության չափանիշներին համապատասխանող դպրոցական շենքերում սովորող աշակերտների տոկոսը բազային տվյալների համեմատ ավելացել է առնվազն 5.3 տոկոսային կետով: (թույլատրվում է մասնակի հատկացում)

Հատկացման հետ կապակցված ցուցանիշներ (ՀԿՑ)	Բազային տվյալ եւ տարի	Կարգավիճակը 2023 թվականի մարտի դրությամբ	2023-2024	2024-2025	2025-2026	2026-2027
				հատկացում)	հատկացում)	
ՀԿՑ 2: 46 դպրոցներ, որոնք բավարարում են ՄՍԿ երկրաշարժերի ուժգնության սանդղակի-IX բալ ուժգնությամբ երկրաշարժի անվտանգության չափանիշները բավարարող դպրոցական շենքեր:	Զրո դպրոց սույն ԱՀՎ ծրագրի շրջանակում, որոնք բավարարում են ՄՍԿ երկրաշարժերի ուժգնության սանդղակի-IX բալ ուժգնությամբ երկրաշարժի անվտանգության չափանիշները բավարարող դպրոցական շենքեր:	10 դպրոց, որոնք ունեն ՄՍԿ երկրաշարժերի ուժգնության սանդղակի-IX բալ ուժգնությամբ երկրաշարժի անվտանգության չափանիշները բավարարող դպրոցական շենքեր:	Առնվազն 15 դպրոց, որոնք ունեն ՄՍԿ երկրաշարժերի ուժգնության սանդղակի-IX բալ ուժգնությամբ երկրաշարժի անվտանգության չափանիշները բավարարող դպրոցական շենքեր: (թույլատրվում է մասնակի հատկացում)	Առնվազն 24 դպրոց, որոնք ունեն ՄՍԿ երկրաշարժերի ուժգնության սանդղակի-IX բալ ուժգնությամբ երկրաշարժի անվտանգության չափանիշները բավարարող դպրոցական շենքեր: (թույլատրվում է մասնակի հատկացում)	Առնվազն 40 դպրոց, որոնք ունեն ՄՍԿ երկրաշարժերի ուժգնության սանդղակի-IX բալ ուժգնությամբ երկրաշարժի անվտանգության չափանիշները բավարարող դպրոցական շենքեր: (թույլատրվում է մասնակի հատկացում)	Առնվազն 46 դպրոց, որոնք ունեն ՄՍԿ երկրաշարժերի ուժգնության սանդղակի-IX բալ ուժգնությամբ երկրաշարժի անվտանգության չափանիշները բավարարող դպրոցական շենքեր: (թույլատրվում է մասնակի հատկացում)
ՀԿՑ 3. Հանրային իրազեկման արշավների միջոցով առնվազն 50% կանանց մասնակցությամբ 46 համայնքներ ներգրավվել են սեյսմիկ ռիսկի եւ	Զրո համայնք է ներգրավվել հանրային իրազեկման արշավներում սույն ծրագրի ներքո:	Հանրային իրազեկման արշավների միջոցով առնվազն 50% կանանց մասնակցությամբ 8 համայնքներ	Հանրային իրազեկման արշավների միջոցով առնվազն 50% կանանց մասնակցությամբ	Հանրային իրազեկման արշավների միջոցով առնվազն 50% կանանց մասնակցությամբ	Հանրային իրազեկման արշավների միջոցով առնվազն 50% կանանց մասնակցությամբ	Հանրային իրազեկման արշավների միջոցով առնվազն 50% կանանց մասնակցությամբ առնվազն 46

Հատկացման հետ կապակցված ցուցանիշներ (ՀԿՑ)	Բազային տվյալ եւ տարի	Կարգավիճակը 2023 թվականի մարտի դրությամբ	2023-2024	2024-2025	2025-2026	2026-2027
արձագանքման վերաբերյալ տեղերում անցկացվող հանդիպումներին՝ սեյսմիկ արտակարգ իրավիճակներին արձագանքման պլանների համաձայն:		ներգրավվել են սեյսմիկ ռիսկի եւ արձագանքման վերաբերյալ տեղերում անցկացվող հանդիպումներին՝ սեյսմիկ արտակարգ իրավիճակներին արձագանքման պլանների համաձայն:	առնվազն 15 համայնքներ ներգրավվել են սեյսմիկ ռիսկի եւ արձագանքման վերաբերյալ տեղերում անցկացվող հանդիպումներին՝ սեյսմիկ արտակարգ իրավիճակներին արձագանքման պլանների համաձայն: (թույլատրվում է մասնակի հատկացում)	առնվազն 24 համայնքներ ներգրավվել են սեյսմիկ ռիսկի եւ արձագանքման վերաբերյալ տեղերում անցկացվող հանդիպումներին՝ սեյսմիկ արտակարգ իրավիճակներին արձագանքման պլանների համաձայն: (թույլատրվում է մասնակի հատկացում)	առնվազն 40 համայնքներ ներգրավվել են սեյսմիկ ռիսկի եւ արձագանքման վերաբերյալ տեղերում անցկացվող հանդիպումներին՝ սեյսմիկ արտակարգ իրավիճակներին արձագանքման պլանների համաձայն: (թույլատրվում է մասնակի հատկացում)	համայնքներ ներգրավվել են սեյսմիկ ռիսկի եւ արձագանքման վերաբերյալ տեղերում անցկացվող հանդիպումներին՝ սեյսմիկ արտակարգ իրավիճակներին արձագանքման պլանների համաձայն: (թույլատրվում է մասնակի հատկացում)
ՀԿՑ 4. 4ա. Թարմացված եւ համախմբված ԴԱՎԾ՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ մշակված առաջնահերթությունների սահմանման չափորոշիչների օգտագործմամբ, որը	Չկա ԴԱՎԾ՝ ըստ նախատեսվածի	Հասցվել է ավարտին, ԴԱՎԾ-ն թարմացվել է ըստ անհրաժեշտության՝ 2016 թվականից ի վեր:				ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ մշակված առաջնահերթությունների սահմանման չափորոշիչների օգտագործմամբ թարմացված եւ

Ժամանակացույց 2-ի 2-րդ հավելված

Հատկացման հետ կապակցված ցուցանիշներ (ՀԿՑ)	Բազային տվյալ եւ տարի	Կարգավիճակը 2023 թվականի մարտի դրությամբ	2023-2024	2024-2025	2025-2026	2026-2027
հաստատվել է 2015 թվականին (Նախնական արդյունք):						համախմբված ԴԱՎԾ, որը հաստատվել է եւ թարմացվել է ըստ անհրաժեշտության:
4բ. Դպրոցների սեյսմիկ ուժեղացման եւ ամրացման միջազգային լավագույն փորձին համահունչ ուղեցույցները հաստատվել են մինչեւ 2016 թվականը:	Չկան ուղեցույցներ՝ ըստ նախատեսվածի	Հասցվել է ավարտին				Դպրոցների սեյսմիկ ուժեղացման եւ ամրացման միջազգային լավագույն փորձին համահունչ ուղեցույցները հաստատվել են եւ հասցվել ավարտին:
4գ. Դպրոցական շենքերի համար թարմացված շինարարական նորմերը ներդաշնակեցվել են միջազգային չափանիշներին եւ հաստատվել մինչեւ 2016 թվականը:	Չկա թարմացված շինարարական նորմ՝ ըստ նախատեսվածի	Հասցվել է ավարտին				Դպրոցական շենքերի համար թարմացված շինարարական նորմերը ներդաշնակեցվել են միջազգային չափանիշներին եւ հաստատվել:
4դ. Սեյսմիկ վտանգի հավանականության ազգային քարտեզը թարմացվել է	Չկա քարտեզ՝ ըստ նախատեսվածի	Հասցվել է ավարտին				Սեյսմիկ վտանգի հավանականության ազգային քարտեզը

Հատկացման հետ կապակցված ցուցանիշներ (ՀԿՑ)	Բազային տվյալ եւ տարի	Կարգավիճակը 2023 թվականի մարտի դրությամբ	2023-2024	2024-2025	2025-2026	2026-2027
սեյսմիկ ռիսկի գնահատման հիման վրա եւ հաստատվել մինչեւ 2018 թվականը:						թարմացվել է սեյսմիկ ռիսկի գնահատման հիման վրա եւ հաստատվել:
ՀԿՑ 5. 5ա. Առնվազն 11 հավելյալ աշխատողներ են հավաքագրվել եւ տեղաբաշխվել ՀՏՀՀ-ում մինչեւ 2015 թվականը: (Նախնական արդյունք)	Զրո անձնակազմ է հավաքագրվել սույն ԱՀՎ ծրագրի շրջանակում	Հասցվել է ավարտին				11 հավելյալ աշխատողներ են հավաքագրվել եւ տեղաբաշխվել ՀՏՀՀ-ում:
5բ. Ձեւանմուշային մրցութային փաստաթղթեր են պատրաստվել՝ համաձայն միջազգայնորեն ընդունված գնումների ընթացակարգերի:	Չկան ձեւանմուշային մրցութային փաստաթղթեր՝ ըստ նախատեսվածի	Հասցվել է ավարտին				Ձեւանմուշային մրցութային փաստաթղթեր են պատրաստվել՝ համաձայն միջազգայնորեն ընդունված գնումների ընթացակարգերի:
5գ. Ծրագրի մոնիթորինգի եւ գնահատման համակարգը սոցիալական եւ գեներացիայի ցուցանիշներով ներդրվել է նախքան 2016 թվականը	Չկա համակարգ՝ ըստ նախատեսվածի	Հասցվել է ավարտին				Ծրագրի մոնիթորինգի եւ գնահատման ներդրված համակարգ՝

Ժամանակացույց 2-ի 2-րդ հավելված

Հատկացման հետ կապակցված ցուցանիշներ (ՀԿՑ)	Բազային տվյալ եւ տարի	Կարգավիճակը 2023 թվականի մարտի դրությամբ	2023-2024	2024-2025	2025-2026	2026-2027
						սոցիալական եւ գենդերային ցուցանիշներով:
5դ. ՀՏՀՀ-ի գործառնությունների ձեռնարկը թարմացվել եւ ընդունվել է Ծրագրի համար նախքան 2016 թվականը:	Չկա թարմացված ձեռնարկ՝ ըստ նախատեսվածի	Հասցվել է ավարտին				ՀՏՀՀ-ի գործառնությունների ձեռնարկը թարմացվել եւ ընդունվել է Ծրագրի համար:
5ե. Ծրագրի կառավարման, իրականացման եւ մոնիթորինգի մեջ ներգրավված 30 պետական պաշտոնյաներ, որոնց առնվազն 40%-ը կանայք են, վերապատրաստվել եւ լիցենզավորվել են ըստ անհրաժեշտության մինչեւ 2018 թվականը:	Զրո վերապատրաստված եւ լիցենզավորված՝ ըստ նախատեսվածի:	Հասցվել է ավարտին				Ծրագրի կառավարման, իրականացման եւ մոնիթորինգի գործում ներգրավված 30 պետական պաշտոնյաներ, որոնց առնվազն 40%-ը կանայք են, վերապատրաստվել եւ լիցենզավորվել են:

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 3

Ծրագրի կատարում

Իրականացման մեխանիզմներ

1. Վարկառուն եւ Ծրագիրը կատարող մարմինն ապահովում են, որ Ծրագիրն իրականացվի ԾԻՓ-ում սահմանված մանրամասն մեխանիզմների համաձայն: ԾԻՓ-ի ցանկացած հետագա փոփոխություն ուժի մեջ է մտնում միայն Վարկառուի եւ ԱԶԲ-ի կողմից տվյալ փոփոխությունը հաստատելուց հետո: ԾԻՓ-ի եւ սույն Վարկային Համաձայնագրի միջեւ որեւէ անհամապատասխանության դեպքում գերակայում են սույն Վարկային համաձայնագրի դրույթները:

2. Վարկառուն ապահովում է, որ Ծրագրի շրջանակներում Թույլատրելի ծախսերի ընդհանուր գումարը հավասար լինի Վարկառուի կողմից Ծրագրի համար առհանված Վարկային միջոցներին կամ գերազանցի դրանք: Այս Թույլատրելի ծախսերը ԴԱՎԾ-ի շրջանակներում կատարված ծախսերի մի մասն են, սակայն դրանք բացառում են ցանկացած ծախս, որն արվում է հետեւյալ նպատակներով՝ ա) ԱԶԲ-ի անդամ չհանդիսացող երկրներից աշխատանքների, ապրանքների եւ ծառայությունների ձեռքբերում, բ) ԱԶԲ-ի կողմից արգելված կամ կասեցված ֆիզիկական կամ իրավաբանական անձանցից աշխատանքների, ապրանքների եւ ծառայությունների ձեռքբերում, գ) բարձրարժեք պայմանագրերի հետ կապված գնումներ, դ) գործողություններ, որոնք Անվտանգության մեխանիզմների քաղաքականության փաստաթղթի համաձայն դասակարգվում են որպես շրջակա միջավայրի վրա A դասի ազդեցություն ունեցող, ե) գործունեություններ, որոնք գնահատվել են որպես հավանական էական բացասական ազդեցություններ ունեցող, որ զգայուն, բազմազան կամ աննախադեպ են շրջակա միջավայրի եւ/կամ տուժած մարդկանց վրա. եւ գ) գործողություններ, որոնք ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականության փաստաթղթի 5-րդ հավելվածում սահմանված արգելված ներդրումային գործողություններ են:

3. Վարկառուն ապահովում է կամ այնպես անում, որ Ծրագիրը կատարող մարմինն ապահովի, որ ծրագրի իրականացման կամ ֆինանսական միջոցների օգտագործմանն առնչվող շահակիրների բողոքները, այդպիսիք լինելու դեպքում, արդյունավետորեն հասցեագրվեն:

4. Վարկառուն ապահովում է, որ Ծրագիրը կատարող մարմինն իր մասով կատարի սույն Վարկային համաձայնագրում ներառված բոլոր պահանջները եւ պարտավորությունները՝ Ծրագրի նպատակները ժամանակին եւ արդյունավետորեն իրագործելու համար:

ՀԿՑ համապատասխանություն եւ ծրագրերի միջեւ երկխոսություն

5. Վարկառուն ապահովում է, որ Ծրագրի շրջանակում ձեռք բերված ՀԿՑ-ները շարունակեն պահպանվել ԴԱՎԾ-ի տեսողության ընթացքում:

6. Վարկառուն տեղեկացնում է ԱԶԲ-ին օգնություն տրամադրող բազմակողմ եւ երկկողմ այլ կազմակերպությունների հետ այնպիսի քննարկումների մասին, որոնք կարող են հետեւանքներ ունենալ ԴԱՎԾ-ի եւ Ծրագրի իրականացման համար, եւ ԱԶԲ-ին ընձեռում է ստացվող առաջարկների մասով դիտողություններ ներկայացնելու հնարավորություն: Վարկառուն պատշաճորեն հաշվի է առնում ԱԶԲ-ի տեսակետները՝ նախքան նման առաջարկը վերջնականացնելը եւ իրականացնելը:

Բյուջետային հատկացում

7. Վարկառուն եւ Ծրագիրը կատարող մարմինն ապահովում են, որ բոլոր քաղաքականությունները, գործընթացները եւ ընթացակարգերը լինեն գործուն՝ Ծրագրի մասով պատշաճ եւ ժամանակին բյուջետային հատկացումները հասանելի դարձնելու համար՝ Ծրագրի ռեսուրսային պահանջներին համապատասխան:

8. Վարկառուն եւ Ծրագիրը կատարող մարմինն ապահովում են դպրոցների գործարկման եւ պահպանության համար տարեկան բյուջեի բաշխման համակարգի սահուն վերափոխումը եւ ապահովում, որ լինեն բավարար ֆինանսական միջոցներ՝ Ծրագրի շրջանակում ամրացված կամ վերակառուցված դպրոցների գործարկման եւ պահպանության համար դրանց գործունեության ողջ ժամանակահատվածում՝ համաձայն գործառնական եւ պահպանության ողջամիտ գործելակերպերի, ներառյալ՝ այդ դպրոցների շարունակական սեյսմիկ դիմակայության հետ կապված գործելակերպերը:

Տեխնիկական պահանջներ

9. Վարկառուն ապահովում է կամ այնպես անում, որ Ծրագիրը կատարող մարմինն ապահովի, որ տեխնիկական պահանջների հետ կապված Ծրագրի բոլոր գործողություններն իրականացվեն ժամանակին եւ արդյունավետորեն:

Ֆինանսական կառավարում

10. Վարկառուն ապահովում է կամ այնպես անում, որ Ծրագիրը կատարող մարմինն ապահովի, որ ֆինանսական կառավարման հետ կապված Ծրագրի բոլոր գործողություններն իրականացվեն ժամանակին եւ արդյունավետորեն:

Գնումներ

11. Վարկառուն ապահովում է, որ Ծրագրի շրջանակում յուրաքանչյուր պայմանագիր շնորհվի Ծրագրի գնումների համակարգի հիման վրա՝ պատշաճ կերպով պահպանելով մրցակցության, տնտեսվարության եւ արդյունավետության, թափանցիկության, արդարության եւ հավասար հնարավորության սկզբունքները:

12. Վարկառուն ապահովում է կամ այնպես անում, որ Ծրագիրը կատարող մարմինն ապահովի, որ գնումների հետ կապված Ծրագրի բոլոր գործողություններն իրականացվեն ժամանակին եւ արդյունավետորեն:

Բնապահպանական եւ սոցիալական երաշխիքներ

13. Վարկառուն ապահովում է կամ այնպես անում, որ Ծրագիրը կատարող մարմինն ապահովի, որ բնապահպանական եւ սոցիալական երաշխիքների հետ կապված Ծրագրի բոլոր գործողություններն իրականացվեն ժամանակին եւ արդյունավետորեն:

14. ա) Վարկառուն ապահովում է կամ այնպես անում, որ Ծրագիրը կատարող մարմինն ապահովի, որ Ծրագրի շրջանակում ոչ մի շինարարություն կամ վերականգնում չունենա էական բացասական բնապահպանական ազդեցություններ, որոնք կարող են ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականության փաստաթղթի համաձայն դասակարգվել որպես A դասի ազդեցություն ունեցող: Նախքան Ծրագրի շրջանակում որեւէ շինարարություն կամ վերականգնում սկսելը Վարկառուն կատարում է կամ ապահովում, որ Ծրագիրը կատարող մարմինը կատարի սքրինինգ՝ Ծրագրից ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականության փաստաթղթի իմաստով որպես A դասի բնապահպանական ազդեցություն ունեցող աշխատանքների բացառումն ապահովելու նպատակով:

բ) Վարկառուն ապահովում է կամ այնպես անում, որ Ծրագիրը կատարող մարմինն ապահովի, որ Ծրագրի շրջանակում բոլոր գործողությունների նախապատրաստումը, նախագծումը, շինարարությունը, իրականացումը, գործարկումը եւ դադարեցումը համապատասխանեն՝ (i) շրջակա միջավայրին, առողջապահությանը եւ անվտանգությանն առնչվող՝ Վարկառուի բոլոր կիրառելի օրենքներին, կանոնակարգերին եւ ուղեցույցներին, (ii) Բնապահպանական անվտանգության երաշխիքներին, եւ (iii) բոլոր միջոցառումներին եւ

պահանջներին, ներառյալ՝ մոնիթորինգի պահանջները, որոնք ամրագրված են Ծրագրի Գործողությունների պլանում:

15. Վարկառուն ապահովում է կամ այնպես անում, որ Ծրագիրը կատարող մարմինն ապահովի, որ Ծրագիրը չներառի տարաբնակեցման ռիսկեր կամ ազդեցություններ՝ ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականության փաստաթղթի իմաստով: Եթե չնախատեսված հանգամանքներով պայմանավորված Ծրագիրը ներառում է այդպիսի ազդեցություններ, ապա Վարկառուն ապահովում է, որ Ծրագիրը համապատասխանի՝ ա) տարաբնակեցմանն առնչվող բոլոր կիրառելի օրենքներին եւ կանոնակարգերին, բ) Հարկադիր տարաբնակեցման երաշխիքներին, եւ գ) բոլոր միջոցառումներին ու պահանջներին, ներառյալ՝ մոնիթորինգի պահանջները, որոնք ամրագրված են Ծրագրի Գործողությունների պլանում:

16. Վարկառուն ապահովում է կամ այնպես անում, որ Ծրագիրը կատարող մարմինն ապահովի, որ Ծրագիրը չներառի բնիկ ժողովուրդների համար ռիսկեր կամ ազդեցություններ՝ ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականության փաստաթղթի իմաստով: Եթե չնախատեսված հանգամանքներով պայմանավորված Ծրագիրը ներառում է այդպիսի ազդեցություններ, ապա Վարկառուն ապահովում է, որ Ծրագիրը համապատասխանի՝ ա) բնիկ ժողովուրդներին առնչվող բոլոր կիրառելի օրենքներին եւ կանոնակարգերին, բ) Բնիկ ժողովուրդների երաշխիքներին, եւ գ) բոլոր միջոցառումներին ու պահանջներին, ներառյալ՝ մոնիթորինգի պահանջները, որոնք ամրագրված են Ծրագրի Գործողությունների պլանում:

Գենդերային եւ սոցիալական հավասարություն

17. Վարկառուն ապահովում է կամ այնպես անում, որ Ծրագիրը կատարող մարմինն ապահովի, որ գենդերային եւ սոցիալական հավասարության հետ կապված Ծրագրի բոլոր գործողություններն իրականացվեն ժամանակին եւ արդյունավետորեն:

Մոնիթորինգ եւ գնահատում

18. Վարկառուն ապահովում է կամ այնպես անում, որ Ծրագիրը կատարող մարմինն ապահովի, որ մոնիթորինգի եւ գնահատման հետ կապված Ծրագրի բոլոր գործողություններն իրականացվեն ժամանակին եւ արդյունավետորեն:

Կառավարում եւ հակակոռուպցիոն գործողություններ

19. Վարկառուն ապահովում է կամ այնպես անում, որ Ծրագիրը կատարող մարմինն ապահովի, որ Ծրագիրը համապատասխանի Հակակոռուպցիոն ուղեցույցներին, եւ որ ձեռնարկվեն բոլորը համապատասխան եւ յուրաժամանակյա միջոցառումները Ծրագրին առնչվող խարդախության, կոռուպցիայի կամ այլ արգելված գործողությունների մասով մեղադրանքների կանխարգելման, հայտնաբերման եւ դրանց արձագանքման նպատակով՝ Հակակոռուպցիոն ուղեցույցներին համապատասխան:

20. Վարկառուն ապահովում է կամ այնպես անում, որ Ծրագիրը կատարող մարմինն ապահովի, որ՝ ա) ԱԶԲ-ն անհապաղ տեղեկացվի Ծրագրին վերաբերող խարդախության, կոռուպցիայի կամ որեւէ այլ արգելված գործունեության մասով մեղադրանքների մասին, եւ բ) ապահովի ԱԶԲ-ի կողմից մեղադրանքներին առնչվող հետաքննության շրջանակներում անվերապահ համագործակցություն եւ աջակցության տրամադրում, ներառյալ՝ բոլոր համապատասխան գրառումներին հասանելիության ապահովում՝ հետաքննության համարժեք իրականացման նպատակով:

21. Ուժի մեջ մտնելու օրվանից 90 օրվա ընթացքում Վարկառուն թարմացնում կամ ապահովում է, որ Ծրագիրը Կատարող գործակալությունը թարմացնի իր հանրային կայքը՝ ա) Ծրագրի ընթացքի մասին տեղեկատվություն տրամադրելու, բ) Ծրագրի՝ տարեկան աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունները հասանելի լինելուն պես դրանք տեղադրելու, եւ գ) Ծրագրի իրականացման վերաբերյալ այլ համապատասխան տեղեկատվություն տարածելու նպատակով: